Արձանագրություն N 2
«ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

*Ք.Գորիս, Գ.Տաթևացի 31*

«15» «հուլիս» 2025թ.
ժ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հասմիկ Փարսյան, Լուսինե Մաթևոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Տոռոզյան

Տեղեկություն www.eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում հայտերի բացման վերաբերյալ

1.1 «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերը էլեկտրոնային աճուրդի www.eauction.armeps.am համակարգի միջոցով հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2025թվականի հուլիսի 14-ը ժամը 12:00, իսկ հակադարձ աճուրդը ավարտվել է հուլիսի 15-ին ժամը 12:33-ին:

1.2 ԷԱՃ մրցույթի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Կազմակերպության անվանումը | Հասցե, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոս |
|---|---|---|
| 1 | «Յունիմեդ» ՍՊԸ | Ք.Երևան, Կիևյան 11/3, unimed7@yandex.ru, հեռ. 010229692 |
| 2 | «ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ | Գեղարքունիքի մ., գ. Աստղաձոր, Ազատամարտիկների 6/3, attenders@list.ru, հեռ. 094930127 |
| 3 | «Բաղդասարյան 88» ՍՊԸ | Ք.Երևան, Գայի պողոտա 31/34, bghda88@gmail.com, հեռ.098815665 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2 «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն համաձայն հավելված N1-ի
- Իրական շահառուների մասին հայտարարգիրը հավելված N1.3-ի
- Գնային առաջարկ www.eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում

Սակայն «Յունիմեդ» ՍՊԸ –ի հայտում բացակայել է առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հանձնաժողովի որոշման համաձայն առաջարկվել է շտկել նշված անհամապատասխանությունները ծանուցելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում :

Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել և շարունակել 2025թվականի հուլիսի 17-ին ժամը 14:00- ին, նույն հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**Նիստը շարունակվել է հուլիսի 17-ին ժամը 14:00-ին, որին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները:**

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որշման 41-րդ կետը մեկ աշխատանքային օրվա ընթացքում «Յունիմեդ» ՍՊԸ –ի կողմից կատարվել է շտկում սահմանված ժամկետում:

2.3 Նվազագույն գին ներկայացրած մասնակցի՝ «Յունիմեդ» ՍՊԸ -ի կողմից www.eauction.armeps.am համակարգում ներկայացրած հայտը համակարգի կողմից անցողիկ է, ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին և հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. <u>Մասնակիցների կողմից առաջարկված և նախահաշվային գների վերաբերյալ</u>

Մասնակիցների կողմից առաջարկված և նախահաշվային գները հետևյալն են.

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Անվանումը | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | 1 | Ախտորոշման գերձայնային (ԷԽՈ), ուլտրաձայնային և դոպլեր հետազոտությունների համակարգ | ՅՈՒՆԻՄԵԴ ՍՊԸ | 6300000 AMD | 6300000 AMD | 0 % | 6300000 AMD | 6237000 AMD | 0 % | 6237000.00 AMD | |
| 1 | 2 | | ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ | 6300000 AMD | 460000000 AMD | 20 % | 552000000 AMD | 460000000 AMD | 20 % | 552000000.00 AMD | Մերժված |
| 1 | 3 | | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ | 6300000 AMD | 1420000000 AMD | 20 % | 1704000000 AMD | 1420000000 AMD | 20 % | 1704000000.00 AMD | Մերժված |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

## 4. «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Գնման հանձնաժողովը որոշեց՝

4.1 ընտրված մասնակից ճանաչել՝

- «Յունիմեդ» ՍՊԸ –ին

4.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և հրապարակել:

4.3 <Գնումների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.4. Պայմանագրի կնքման նպատակով «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հաղթող ճանաչված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել մատակարարման պայմանագրի կնքման առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

---

5.1. «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, , ք.Գորիս, Գր.Տաթևացի 31 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | ______________ | Լևոն Հարությունյան |
| Անդամներ՝ | ______________ | Լուսինե Մաթևոսյան |
| | ______________ | Հասմիկ Փարսյան |
| Քարտուղար՝ | ______________ | Կարինե Տոռոզյան |